Հաշվետվություն

Կարեն Ադամյանի՝ Ռումինիա գործուղման արդյունքների վերաբերյալ

ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Կարեն Ադամյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ռումինիա (Տուլչա նահանգ)

2017 թվականի հունիսի 6-8-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ռումինիայի Տուլչայի նահանգային խորհուրդ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ռումինիայի Տուլչայի նահանգի և ՀՀ Տավուշի մարզի միջև համագործակցության համաձայնագրի ստորագրում

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Այց Բուխարեստի հայկական Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցի,

Հանդիպում Տուլչայի նահանգից ընտրված Ռումինիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր Լուչիան Սիմիոնի հետ,

ՀՀ Տավուշի մարզի և Տուլչա նահանգի միջև համագործակցության համաձայնագրի ստորագրում:

Սստորագրման արարողությանը ռումինական կողմից ներկա էին՝ նահանգի հանրային կառավարիչ Վասիլե Ստրատը, Տուլչայի նահանգային խորհրդի փոխնախագահ Դումիտրու Մերջանին, նահանգի պրեֆեկտ Լուչիան Ֆուրդույը, Տուլչայի փոխքաղաքապետ Պետրե Մարինեսկուն, նահանգային իշխանությունների այլ ներկայացուցիչներ, ինչպես նաև Ռումինիայի Հայոց միության Դոբրուջայի շրջանի նախագահ Լիվիու Մերդինյանը:

Համագործակցության համաձայնագիրը պաշտոնապես ուժի մեջ մտավ հունիսի 7-ին՝ ստորագրման պահից սկսած: Այն նախատեսում է համագործակցություն Տավուշի մարզի և Տուլչա նահանգի միջև մշակույթի, կրթության և գիտության, առողջապահության, տեղական ինքնակառավարման, բնապահպանության,

տնտեսության և ներդրումների, երկու կողմերի կազմակերպական մեխանիզմների շուրջ փորձի փոխանակման, սպորտի, զբոսաշրջության ոլորտներում, ինչպես նաև հաճախակի փոխայցելությունների, տոնական միջոցառումների կազմակերպում և այլն:

Ստորագրման արարողությունից հետո տեղի ունեցած աշխատանքային քննարկումների ընթացքում կողմերը պայմանավորվեցին առաջին քայլերը սկսել մշակութային կոնկրետ ծրագրերով, ինչպես նաև տուրիզմի ուղղությամբ փոխադարձ հնարավորությունների բացահայտմամբ: Այդ նպատակով հայկական պատվիրակությունը եղավ Դանուբի գետաբերանում և արգելոցում, Տուլչա քաղաքի տեսարժան վայրերում, այդ թվում՝ Տուլչայի Հայոց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Կ. Ադամյան